Ուսանողական հետազոտություն

# Կոռուպցիայի դրսևորումները Արցախում. պատճառները և կանխարգելման հնարավոր ուղիները

Ստեփանակերտ 2023

## Աստղիկ Բաբայան

**Արցախի պետական համալսարան,**

**Իրավագիտություն, 3-րդ կուրս**

*Գիտական ղեկավար՝ ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս, հայցորդ*

*Լուսինե Սուլեյմանյան*


# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ


Հետազոտությունն իրականացվել է «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպության և Արցախի պետական համալսարանի համագործակցության արդյունքում՝ ուսանողական հետազոտական աշխատանքների դրամաշնորհի շրջանակում:

**Ներածություն**

Կոռուպցիան[1] պատմական զարգացման բոլոր փուլերում գոյություն ունեցող մարդկությանը նետված մարտահրավեր է[2], որը հաղթահարելու ոչ պակաս առաջնայնություն ունի, մշտապես գտնվում է հետազոտողների և իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում, իսկ 21-րդ դարում առանձնանում է առավել մեծ ակտուալությամբ:

Դեռևս հին ժամանակներից իշխանությունն ու կոռուպցիան անբաժան են եղել: Պատմության ընթացքում, պետության էվոլյուցիային զուգահեռ, զարգանում է կոռուպցիան: Եթե պետականության ձևավորման արշալույսին որպես համընդհանուր նորմ էր համարվում քահանայի, առաջնորդի կամ զորահրամանատարի վճարումը նրանց օգնության համար, ապա ավելի ուշ, պետական ապարատի բարդացմամբ, պրոֆեսիոնալ պաշտոնյաները սկսեցին պաշտոնապես ստանալ միայն ֆիքսված եկամուտ, ինչը նշանակում էր կաշառքների անցում ստվերային տնտեսության[3]: Իհարկե, աշխարհաքաղաքական փոփոխությունները չէին կարող չազդել կոռուպցիայի բնույթի և ծավալի վրա. պատմության մեջ քիչ չեն նաև այս երևույթի հետ կապված լճացման դեպքերը, երբ մարդիկ կատարում էին կոռուպցիոն բնույթի հանցագործություններ՝ նույնիսկ գտնելով, որ «դա է ճիշտը», «հիմա բոլորն են այդպես անում», և ի վերջո գործնականում անհնար էր դառնում դրա դեմ պայքարը:

Հայկական երկու պետություններն իրենց հերթին անմասն չեն մնացել կոռուպցիայից, պատմության ու կոռուպցիայի՝ համընթաց քայլելու մասին վերոնշյալը տեսանելի է նաև մեր դեպքում: Իհարկե, պատմական և սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով պայմանավորված՝ կոռուպցիոն պատկերը միշտ չէ հնարավոր համեմատել այլ՝ նաև (կամ հատկապես) հարևան պետություններում տիրող իրավիճակի հետ. Իրադրությունն այլ է թե՛ կոռուպցիոն հանցագործությունների տեսակների, թե՛ դրանով վտանգվող ոլորտների, և թե՛ մանավանդ ծավալների և հաճախականության առումով. որոշ ընդհանրություններ կարող են նկատվել պատճառների, հակազդման և կոռուպցիայի դեմ պայքարով հետապնդվող նպատակների դեպքում:

**Իսկ ինչու՞ է անհրաժեշտ (կամ արդյո՞ք անհրաժեշտ է) պայքարել կոռուպցիայի դեմ,** մի՞թե դրա բացակայությունը նպաստում է մարդկության և պետության վիճակի բարելավմանը, ի՞նչը չի բավարարում հասարակությանը կոռուպցիայի առկայության պայմաններում, որ կլինի, երբ այն վերանա: Արդյո՞ք մեր դեպքում ողջամիտ և նպատակային է այդքան ռեսուրսներ ներդնել այդ պայքարի իրականացման համար, որոնք են պայքարի գործիքները, մեր հատկապես ո՞ր խնդիրներն են դրանք լուծում...:

---

[1] «Մենք կոռուպցիան սահմանում ենք որպես պաշտոնի չարաշահում անձնական օգուտ ստանալու նպատակով». Առավել սպառիչ կերպով իր պաշտոնական կայքէջում նշում է Transparency International հակակոռուպցիոն կազմակերպությունը. https://www.transparency.org/en/what-is-corruption.

[2] Կոռուպցիայի մասին առաջին հիշատակումները վերաբերում են մ. թ. ա. 24-րդ դարին:

[3] Коррупция: причины возникновения, влияния и методы борьбы, Лучшие доклады на научной студенческой конференции «Социальная ответственность государства, бизнеса и гражданского общества» МГИМО-Университет, 5 декабря 2008 года https://mirec.mgimo.ru/2009/2009-01/korrupciya-prichiny-vozniknoveniya-vliyaniya-i-metody-borby2#_ftn1.

Պետք է նշել, որ հասարակության պահանջն ու անհանդուրժողականությունը, սերտ և թափանցիկ համագործակցությունը պետության և իրավապահ մարմինների հետ բազմաթիվ երկրներում տվել են իրենց պտուղները. մարդիկ գտել են իրավիճակի շտկման միջոցներ, կուտակել են ահռելի փորձ և գիտելիքներ, մշակել են մեխանիզմներ և մոդելներ և հաջողության հասել դրանց գործարկման շնորհիվ՝ կարողանալով «ճնշել կոռուպցիան»:

Եվ ուրեմն՝ **ի՞նչ կարող ենք անել մենք՝** քաղաքացիներս, ու մասնավորապես և առավելապես երիտասարդներս այսպիսի իրավիճակները մեր երկրում փոքրիշատե փոխելու համար, ի՞նչ կտա դա մեզ Արցախում, այստեղ կա՞ն, արդյոք, հնարավորություն և միջոցներ պլանավորած միջոցառումներն իրականացնելու:

Այսօրինակ հարցերի պատասխանները տալու առաջնահերթ նպատակ ունի սույն հետազոտական աշխատանքը, որը կատարվել է «կոռուպցիա» եզրույթի և երևույթի, կոռուպցիոն հանցագործությունների, ՌԴ, ԱՄՆ, Եվրոպական առաջատար պետությունների և իհարկե՝ Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության իրավիճակի և կոռուպցիայի հաղթահարման փորձի խորն ուսումնասիրմամբ, ինչպես նաև՝ ԱՀ իրավապահ մարմինների և ՀՀ հակակոռուպցիոն կազմակերպությունների, մասնագետների հետ համագործակցության շնորհիվ:

**Ի՞նչ է կոռուպցիան. Ազդեցություն և վտանգներ. Կոռուպցիոն հանցագործությունները Արցախում. Վիճակագրություն.**

Կոռուպցիան իշխանության կոռոզիա է: Ինչպես ժանգն է քայքայում մետաղը, այնպես էլ կոռուպցիան քանդում է պետական ապարատը և ներսից քայքայում հասարակության բարոյական հիմքերը: Կոռուպցիայի մակարդակը հասարակության ինքնատիպ չափանիշն է, որը ցույց է տալիս հասարակության բարոյահոգեբանական վիճակի և պետական ապարատի ոչ անձնական նկատառումներով, այլ հանուն հանրային շահի խնդիրներ լուծելու ունակության աստիճանը: **Նույն կերպ այն, որ մետաղի համար կոռոզիոն «հոգնածությունը» նշանակում է դրա տոկունության սահմանի իջեցում, այնպես էլ կոռուպցիայից հասարակության հոգնածությունը նշանակում է նրա դիմադրողականության իջեցում**:

Ա. Ի. Կիրպիչնիկով

Դասական իմաստով՝ կոռուպցիան պաշտոնով և իշխանությամբ ձեռք բերված լիազորությունների՝ անձնական նպատակներով չարաշահումն է, որը չի կարող չքայքայել պետական ապարատը: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի վերաբերյալ իրավական սահմանում նախատեսված է միայն *Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայում*՝ հաշվի առնելով այն, որ հիշյալ կոնվենցիան ՀՀ օրենսդրության մաս է կազմում: Սակայն պետք է ամրագրել, որ կոռուպցիայի սահմանումը չափազանց նեղ իմաստով է արտահայտվում տվյալ իրավական ակտում: Այսպես՝ հիշատակված կոնվենցիայի 2-րդ հոդվ. համաձայն՝ այն կիրառություն ունի միայն տվյալ կոնվենցիայով կարգավորվող հարաբերություններում. կոնվենցիայի նպատակների համար «կոռուպցիա» նշանակում է՝ «ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ

այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած պարտականության պատշաճ կատարումը կամ պահանջվող վարքագիծը»:

Միավորված ազգերի կազմակերպությունը կոռուպցիան համարում է «բարդ սոցիալական, մշակութային և տնտեսական երևույթ, որն ազդում է բոլոր երկրների վրա»[4]՝ առանց տերմինի առավել մանրամասն բացատրության: Հատկանշական է, որ անգամ *ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (UNCAC)* տեքստում չկա սահմանում, թե ինչի դեմ են կոչված պայքարելու մասնակից երկրները: Սակայն դա բացատրվում է նրանով, որ կոռուպցիայի երևույթը չափազանց բարդ և բազմակողմանի է, որպեսզի կարողանանք տալ համապարփակ և միևնույն ժամանակ բավարար մանրամասն սահմանում[5]: Այս առումով պետք է հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում հասարակական հարաբերությունների բազմազանությամբ, ինչու ոչ՝ հասարակության գիտական և տեխնիկական զարգացմամբ պայմանավորված կոռուպցիոն հանցագործությունների շարքն աճում է, և պահի դրությամբ հնարավոր չէ հստակ և սպառիչ տալ կոռուպցիայի սահմանումը: Եթե ուշադրություն դարձնենք՝ կոռուպցիայի բազմաթիվ որակումներ ձգտում են առաջնահերթ ընդգծել *չարաշահման և հետևանքի* մասին, քանի որ այս հանցագործությունների դեպքում էական գործոնները սրանք են:

Գլոբալ հակակոռուպցիոն կոալիցիան կոռուպցիան տարբերկում է 2 տեսակների՝ «ըստ կանոնների» (երբ պաշտոնյան անձնական օգուտ է ստանում օրենքով սահմանված իր պարտականությունները կատարելու համար) և «ընդդեմ կանոնների» (երբ պաշտոնյան անձնական օգուտ է ստանում այնպիսի ծառայության կամ գործողության համար, որը իրավունք չունի տրամադրելու կամ կատարելու)[6]:

Լինելով քաղաքացիների, հասարակության և պետության համար ամենավտանգավոր երևույթներից մեկը՝ կոռուպցիան ունի պատմական և հոգեբանական խոր արմատներ: Ցավոք, *շատերի գիտակցության մեջ դա սովորական երևույթ է դարձել, որի հետ պայքարելն անիմաստ է,* և կոռուպցիայի դեմ պայքարի ցանկացած միջոցառման արդյունավետությունը քաղաքացիների կողմից հաճախ գնահատվում է որպես ծայրահեղ ցածր[7]:

Որպես կանոն՝ կոռուպցիայի մակարդակը բարձր է համակարգային զարգացող երկրներում, մինչդեռ այն երկրներում, որտեղ շուկայական տնտեսությունը զարգացած է՝ այն, այսպես ասած, դրվագային բնույթ է կրում:

Միջազգային փաստաթղթերում ընդգծվում է, որ կոռուպցիան հատկապես **վնասակար ազդեցություն է թողնում տնտեսության վրա**, վիժեցնում է ցանկացած տիպի կառավարական

---

[4] United Nations Office on Drugs and Crime (UNODC), http://www.unodc.org
[5] Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը, «ՀՀ Դատախազության դպրոց» ՊՈԱԿ, Գ. Սարգսյան, Ս. Ծաղիկյան, Երևան 2010.
[6] Մտորումներ կոռուպցիայի մասին, henaran.am, http://henaran.am/341651.html , հղման ամսաթիվը՝ 12.01.2023.
[7] Ukaid for British people, Department for international development. "Why corruption matters: understanding causes, effects and how to address them". Evidence paper on corruption, January 2015.

որոշումների և ծրագրերի իրականացումը, վնաս է հասցնում հասարակության բարոյահոգեբանական վիճակին, խաթարում է պետության նկատմամբ քաղաքացիների ունեցած վստահությունը, իշխանության հեղինակությունը, քանդում է արդարության և արդարադատության անկողմնակալության սկզբունքները: Կաշառքով ապահովվում են շահավետ գործարքների կնքումը, անհրաժեշտ փորձաքննությունների նշանակումը, հարկային արտոնությունների ստացումը և այլն:

Կոռուպցիան լուրջ սպառնալիք է **երկրի անվտանգության** համար. այն մեծ վնաս է հասցնում հասարակությանը, խարխլում է պետական իշխանության հիմքերը, նվազեցնում է պետական և մունիցիպալ մարմինների գործունեության արդյունավետությունը և նրանց հեղինակությունը, խոչընդոտում է ընդհանուր երկրի տնտեսական զարգացմանը: Ոչնչացնելով ժողովրդավարական ինստիտուտների և արժեքների, արդարության և հասարակական պարտքի հասկացությունները, կոռուպցիան վնասում է պետության կայուն զարգացմանն ու օրենքի գերակայությանը. Կոռուպցիան դեֆորմացնում է քաղաքացիների իրավագիտակցությունը՝ նրանց մեջ ստեղծելով պաշտոնյաներին կաշառելու միջոցով անձնական և կոլեկտիվ շահերը բավարարելու հնարավորության գաղափարը:

*Կոռուպցիայի առումով Արցախում տիրող իրավիճակի ընդհանուր պատկերը հասկանալու գործում օգնում է անմիջապես Արցախի իրավապահ մարմինների տեսակետի դիտարկումը:* Արցախում այդ երևույթի դեմ պայքարի արդյունքները պատասխանատուները հայաստանյան ցուցանիշների հետ են համեմատում և վստահեցնում՝ տարիների հետ ձեռքբերումներն ավելի նկատելի են դառնում:

2013թ. տվյալներով, ինչպես նշել է այդ ժամանակ Գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնը զբաղեցնող Սերգեյ Ստեփանյանը[8], Արցախում առավել հաճախակի արձանագրվել են պաշտոնական դիրքն օգտագործելով յուրացման կամ վատնման եղանակով հափշտակության դեպքերը: *Այդ տարվա 9 ամսվա տվյալներով արձանագրված 25 հանցագործությունից 11-ը, կամ՝ 44%-ը նշված հանցատեսակն է: Ի դեպ, 2013թ. տվյալների համեմատությամբ 2014թ.-ին կոռուպցիոն հանցագործությունների թիվը Արցախում զգալիորեն նվազել է. 2013թ.-ին կոռուպցիոն հանցագործությունների տեսակարար կշիռը կազմում էր 7,1%, իսկ 2014 թ.-ին՝ 4,6[9]:*

«Ընդհանուր հանցավորության վիճակը գնահատելիս պետք է արձանագրել, որ մեզ մոտ մի քանի անգամ ավելի լավ վիճակ է, քան մյուս երկրներում: Անցյալ տարվա ամռանը մեզ մոտ էր Ուկրաինայի հանրապետության Լուգանսկի մարզի շրջաններից մեկի դատախազը: Ու երբ հաշվարկեցին ընդհանուր հանցավորության միջին գործակիցը, այսինքն՝ դրանց թիվը 10 հազար բնակչի հաշվարկով, այն իրենց մոտ ավելի քան 3 անգամ գերազանցում էր մերին: Ինչ վերաբերում է կոռուպցիոն հանցատեսակներին, ապա նշեմ, որ նախորդ տարվա 9 ամսվա համեմատությամբ դրանց թիվը նվազել է 15 դեպքով, կամ 37,5%-ով, հանցագործությամբ պատճառված նյութական վնասը նվազել է 14.050.570 ՀՀ դրամով, կամ 25,5 %-ով, կոռուպցիոն

---

[8] prosecutornk.am, ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱԿՆԿԱԼՈՒՄ Է ՈՂՋ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ, Հարցազրույցը վարեց՝ Նորայր Հովսեփյան, www.artsakhtert.com

[9] Արդարությունը պահանջում է նշել, որ 2015թ. տեսակարար կշիռը աճել է, սակայն հետագա տարիներին շարունակել է նվազել: Տվյալները վերցված են ԱՀ Գլխավոր Դատախազության վեբ կայքից.

հանցագործությունների տեսակարար կշիռը գրանցված հանցագործությունների ընդհանուր թվում նույնպես նվազել է 13,9 % մինչև 7,1%, այսինքն մոտ 2 անգամ: ԼՂՀ տարածքում նշված հանցագործությունների միջին գործակիցը 2012թ. տվյալներով կազմել է ընդամենը մոտ 4, մեզ մոտ չկա կազմակերպված հանցավորություն: Դա ի՞նչ է նշանակում: Այսինքն՝ *մեր հանրապետության հասարակական կյանքում կոռուպցիոն դրսևորումները մեծ չեն և շարունակում են նվազել:* Վերջին երեք տարվա վերլուծությունները ցույց են տալիս, որ, օրինակ, 2011թ. համեմատությամբ՝ 2012թ. արձանագրվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կտրուկ աճ՝ ավելի քան 2 անգամ: **Դա պայմանավորված էր հանրապետության իրավապահ մարմինների համատեղ, առավել ակտիվ աշխատանքով, քանի որ նշված հանցատեսակները կրում են լատենտային, այսինքն՝ քողարկված բնույթ, և խնդիրը կայանում էր դրանց հայտնաբերման մեջ:** Իսկ 2013թ. 9 ամսվա կտրվածքով արդեն իսկ արձանագրվել է զգալի նվազում, ինչը տրամաբանական է որպես իրավապահների ակտիվ ու համատեղ աշխատանքի արդյունք»:

Կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարը իրականացվում է ընդհանուր հանցավորության դեմ պայքարի շրջանակներում, իհարկե, *իր առանձնահատկություններով,* և հանդիսանում է դատախազության կարևոր խնդիրներից մեկը: Հաշվի առնելով նշված հանցատեսակների դեմ պայքարի կարևորությունը, **ԼՂՀ տարածքում արձանագրված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը և դատական քննության ընթացքը մշտապես գտնվում են Գլխավոր դատախազության համապատասխան բաժնի ուշադրության ներքո:** Նման հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու համար դատախազությունը համագործակցում է հանրապետության մյուս իրավապահ մարմինների՝ Ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության, Հարկային պետական ծառայության հետ, ինչպես նաև՝ Վերահսկիչ պալատի հետ ունեցած համաձայնագրի շրջանակներում իրականացնում է պրակտիկ շփումներ: Համագործակցություն կա Ֆինանսների նախարարության ֆինանսական դիտարկումների բաժնի հետ, որը գործում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ԼՂՀ օրենքի շրջանակներում:

Կոռուպցիայի առումով ՀՀ, ԱՀ և հարևան երկրների ցուցանիշներին անհամեմատելիության մասին խոսելիս շատերի համար «սփոփիչ է» հայկական երկու պետությունների՝ այս դաշտում նրանց զիջելը, ինչն էլ հաճախ անհետևողականության և, ցավոք, անպատժելիության մթնոլորտ է ստեղծում. այնպիսի տպավորություն է, կարծես նշված երկրների հետ համեմատած ավելի ցածր ցուցանիշ ունենալը արդեն լուծում է մեր խնդիրը:

Ինչպես ժամանակակից բազմաթիվ պետություններ, այնպես էլ ՀՀ- ը և ԱՀ- ը նորմատիվ իրավական ակտով հստակ առանձնացնում են, թե երկրում կոնկրետ որ հանցագործություններն են համարվում կոռուպցիոն: ԼՂՀ Քրեական օրենսգիրքը չի սահմանում այդպիսի առանձին գլուխ՝ «Կոռուպցիոն հանցագործություններ», նշված հանցատեսակները կարող են լինեն *սեփականության, տնտեսական գործունեության, պետական ծառայության, արդարադատության դեմ ուղղված*: Կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը, սակայն նշված հանցատեսակների

զգալի մասի համար պարտադիր անհրաժեշտ է հատուկ սուբյեկտի՝ պաշտոնատար անձի կարգավիճակը:

*ՀՀ Քրեական նոր օրենսգիրքը (գործում է 2022թ. հուլիսի 1-ից ) առանձին գլխով նշում է կոռուպցիոն բնույթի 39 հանցագործություն, մինչդեռ ԱՀ-ում կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանված է Գլխավոր դատախազի 2019թ. դեկտեմբերի 30-ի թիվ 40 հրամանով:*

Ըստ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի՝ կարող ենք դիտարկել ըստ կոռուպցիոն բնույթի առանձին հանցատեսակների՝ 2021թ. նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի շարժը, որը ունեցել է հետևյալ պատկերը.

**Պաշտոնեական դիրքն օգտագործելով խարդախության** (ԱՀ քր. օր-ի 184-րդ հոդված) վերաբերյալ քննվել է 1 քրեական գործ, պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման (ԱՀ քր. օր-ի 185-րդ հոդված) վերաբերյալ՝ 6, Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու (ԱՀ քր. օր-ի 194-րդ հոդված) վերաբերյալ քննվել է 1 քրեական գործ, որը կարճվել է արդարացման հիմքով:

**Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու** (ԱՀ քր. օր-ի 222-րդ հոդված) վերաբերյալ քննվել է 4 քրեական գործ:

**Պաշտոնեական դիրքն օգտագործելով ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման** (ԱՀ քր. օր-ի 307-րդ հոդված) վերաբերյալ քննվել է 1 քրեական գործ:

**Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու** (ԱՀ քր. օր-ի 322-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 8 նյութ, որից 6-ով հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 24 քրեական գործ, որից կարճվել է 9 քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 7-ը՝ արդարացման, 2-ը՝ ոչ արդարացման հիմքով:

**Պաշտոնեական լիազորությունները անցնելու** (ԱՀ քր. օր-ի 323-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 16 նյութ, որից 14-ով հարուցվել է քրեական գործ, 2-ով մերժվել քրեական գործի հարուցումը՝ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 37 քրեական գործ, որից 12-ը կարճվել է՝ արդարացման հիմքով:

**Կաշառք ստանալու** (ԱՀ քր. օր-ի 325-րդ հոդված) վերաբերյալ քննվել է 1 քրեական գործ:

**Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելու** (ԱՀ քր. օր-ի 327-րդ հոդված) վերաբերյալ քննվել է 2 քրեական գործ, որոնք մնացել են անավարտ:

**Կաշառք տալու** (ԱՀ քր. օր-ի 328-րդ հոդված) վերաբերյալ քննվել է 1 քրեական գործ, որը մնացել է անավարտ:

Նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 1 անձ: Քրեական հետապնդման ենթարկված անձը ձերբակալվել է և նրա վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու ու մեղադրանք առաջադրելու մասին: Նշված անձի մասով միջնորդություն է ներկայացվել դատարան՝ կալանավորման վերաբերյալ, որը դատարանը բավարարել է:

**Պաշտոնական կեղծիքի** (ԱՀ քր. օր-ի 332-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 33 քրեական գործ:

**Ապացույցներ կեղծելու** (ԱՀ քր. օր-ի 375-րդ հոդված) վերաբերյալ քննվել է 1 քրեական գործ, որը մնացել է անավարտ:

**Պաշտոնատար անձի կողմից դատական ակտը դիտավորությամբ չկատարելու** (ԱՀ քր. օր-ի 379-րդ հոդված) վերաբերյալ քննվել է 1 քրեական գործ, որը վարույթում կարճվել է արդարացման հիմքով:

2021թ. ընթացքում Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ավարտված նյութերի և ավարտված քրեական գործերի քանակը, որոնցով հանցագործությամբ նյութական վնաս է պատճառվել կազմել է 4, իսկ դրանցով անցնող անձանց քանակը՝ 6: Պատճառված ընդհանուր գույքային վնասի չափը կազմել է 42.436.835 (2020թ.- 12.976.970 ՀՀ դրամ) , որի թվում պետական գույքին պատճառված վնասի չափը կազմել է 40.503.835 ՀՀ դրամ (2020թ.- 9.561.260 ՀՀ դրամ), իսկ իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված վնասի չափը՝ 1.933.000 ՀՀ դրամ (2020թ.- 3.415.710 ՀՀ դրամ): Նշված քրեական գործերով և նյութերով վերականգնվել է ընդհանուր 7.887.235 ՀՀ դրամ (2020թ.- 6.496.000 ՀՀ դրամ), որից պետական գույքին պատճառված վնասի վերականգնման չափը կազմել է 5.954.235 ՀՀ դրամ (2020թ.- 5.373.000 ՀՀ դրամ), իսկ իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված վնասի չափը՝ 1.933.000 (2020թ.- 1.123.170 ՀՀ դրամ)[10]:

Թվարկված վիճակագրական տվյալների և իրականության կապն ավելի լավ պատկերացնելու համար փորձենք դիտարկել Արցախում հենց վերջին շրջանում տեղի ունեցած աղմկահարույց դեպքեր:

Դեռևս 08.10.2021թ. հարուցվել էր քրեական գործ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կողմից պաշտոնական լիազորությունների չարաշահմամբ և պաշտոնական փաստաթղթերի կեղծմամբ ու օգտագործմամբ պետությանը առանձնապես խոշոր չափով գույքային վնաս պատճառելու դեպքերի վերաբերյալ:

---

[10]Տվյալները վերցված են ԱՀ Գլխավոր Դատախազությունից, ԱՀ գլխավոր դատախազության ԿՏԳՊԾԴՈՒՀԳ և ՊԾՊ բաժնի ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Է. Ա. Արզումանյան, Տեղեկանք 2021թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ.

Քրեական գործով իրականացված նախաքննության արդյունքներով հիմնավորվել է, որ հիշյալ կազմակերպության տնօրենը կատարել է ԱՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածով (*պաշտոնական լիազորությունները չարաշահելը*) նախատեսված 15 հանցագործություն, 332-րդ հոդվածով՝ 16 հանցագործություն(*Պաշտոնական կեղծիք*), 184-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ 1 հանցագործություն (*պաշտոնական դիրքն օգտագործելով խարդախություն):* Հիշյալ արարքներով պետությանը պատճառված վնասը կազմել **է 49.440.000** դրամ:

Նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել հանցանք կատարած անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին**, նրա նկատմամբ ընտրվել է անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց, մեղադրյալը ազատվել է զբաղեցրած պաշտոնից:** Քրեական գործով որպես մեղադրյալ են ներգրավվել նաև հանցանքի կատարմանն հանցակցող անձինք:

Գործի մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է դատարան՝ ըստ էության քննելու համար, Դատախազությունը նաև հայտնում է, որ քրեական գործի դատաքննության արդյունքների վերաբերյալ տրվելու է լրացուցիչ տեղեկություն:

Կրթության ոլորտը կոռուպցիայի առումով ամենառիսկայիններից մեկն է, բարեբախտաբար վերոհիշյալ դեպքը իրավապահների կողմից հաջողվել է բացահայտել: Պետք է ընդունենք, որ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում գտնվող երկրի համար **49 միլիոն դրամը փոքր թիվ չէ, և եթե ուշադրություն դարձնենք, ինչպես նշված է վերևում բերված տվյալներում, 2021թ.կոռուպցիոն հանցագործություններով պատճառված վնասը կազմել է 42 մլն., մինչդեռ այս դեպքում սա դեռ միայն 1 հոգու կողմից կատարված արարք է, դրա հետ միասին՝ դրամական կորուստը դեռ ամենավտանգավորը չէ: Վստահ ենք, որ բազմաթիվ քաղաքացիներ սպասում են գործի արդարացի հանգուցալուծմանը:**

Վերջին շրջանում տեղի ունեցած, և կրկին քննարկման առարկա դարձած հանցագործություն է ԱՀ Անվտանգության խորհրդի պաշտոնատար անձի կողմից կատարված արարքը: 2022թ. սեպտեմբեր ամսին ԱՀ անվտանգության խորհրդի պաշտոնատար անձը, համաձայնություն ձեռք բերելով առևտրային կազմակերպության ղեկավարի հետ, առանց ապրանք մատակարարելու մտադրության կազմել են անվտանգության խորհրդի գրասենյակին ապրանքներ մատակարարելու վերաբերյալ ակնհայտ կեղծ հաշիվ-ապրանքագիր, դրա հիման վրա պետական բյուջեից առևտրային կազմակերպությանը փոխանցվել է 26.000.000 ՀՀ դրամ, որից 25.000.000 դրամը կանխիկացվել ու **յուրացման եղանակով հափշտակվել** է՝ այդ կերպ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափի գույքային վնաս[11]: Գործով տարվում է պատշաճ քննություն: Անգամ ավելորդ է նշել այս իրավիճակում այս կառույցի կարևորության մասին և այն, թե այդ գումարները հատկապես ինչ նպատակներով կարելի էր օգտագործել:

[11] Ազատություն Ռադիոկայան, Արցախի անվտանգության խորհրդի պաշտոնյան պետությունից 25 միլիոն դրամ է հափշտակել. Դատախազություն, https://www.azatutyun.am/a/32290101.html.

2013թ. դրությամբ Ստեփանյանի հայտնած տվյալների հետ համեմատության մեջ դնելով վերը բերված տվյալները, նկատում ենք, որ իրավիճակն այնուամենայնիվ ունեցել է դրական շարժ: Կարծում ենք, որ հասարակության անհանդուրժողականությունն ու լուրջ վերաբերմունքը զգալի փոփոխություն կմտցնեն իրավիճակում, ինչու ոչ՝ կօգնեն իրավապահ մարմիներին իրենց աշխատանքում:

**Կոռուպցիա. Պատճա՞ռ թե՞ հետևանք. Արցախում կոռուպցիայի հակազդման արդյունավետ գործիքներ**

Կոռուպցիայի **արմատների** մասին խոսելիս կարող են հանդիպել տարբեր վերլուծությունների և կարծիքների: Որոշ հետազոտողներ այս հարցին տալիս են հակիրճ և սրամիտ պատասխան: Առաջիններից մեկը, ով դա արեց, պրոֆեսոր Ռոբերտ Կլիտգարդն էր՝ հայտնի «կոռուպցիոն բանաձևի» ստեղծողը:

***Կ = Մ+ կ- Պ [ Կ– կոռուպցիա, – մոնոպոլիաների իշխանություն, կ – որոշումների կամայականություն, Պ – պատասխանատվություն.]***[12]

Այլ կերպ ասած՝ կոռուպցիան որոշվում է մենաշնորհային իշխանության աստիճանով և կամայական որոշումներ կայացնելու իրավունքով, որով «օժտված են պետական պաշտոնյաները», ինչպես նաև՝ իրենց գործողությունների համար պատասխանատվության աստիճանով:

Պակաս հետաքրքիր չէ պատճառների հայտնաբերմանը վերաբերող երկրորդ բանաձևը.

*ԿՈՌՈՒՊՑԻԱ$_{ԵՏ}$ = ƒ (Տնտեսական բարեկեցություն$_{ԵՏ,}$ Ժողովրդավարություն$_{ԵՏ,}$ Դատական համակարգ$_{ԵՏ,}$ Կառավարության բնութագիրը$_{ԵՏ,}$ Պատմություն$_{ԵՏ,}$ Աշխարհագրություն$_{ԵՏ}$)*[13]

Որտեղ Ե- Երկիր, Տ- տարի:

*Նմանատիպ բանաձև օգտագործվում է ինդեքսների հաշվարկման համար, ինչպիսիք են ԿԸՀ-ը*[14]*(Կոռուպցիայի ընկալման համաթիվ) Թրանսփարենսի Ինթերնեշնլում կամ Համաշխարհային կառավարման ցուցիչները*[15] *Համաշխարհային Բանկում:*

Բանաձևի վերլուծությունը թույլ կտա նկատել կոռուպցիային նպաստող մի քանի գործոններ:

---

[12] https://mirec.mgimo.ru/2009/2009-01/korrupciya-prichiny-vozniknoveniya-vliyaniya-i-metody-borby2#_ftnref8, բանաձևը «թարգմանված է».
[13] Rajeev K. Goel and Michael A. Nelson, Causes of corruption: History, geography and government, BOFIT Discussion Papers, Helsinki, 2008.
[14] CPI- Corruption Perception Index.
[15] WGI- Worldwide Governance Indicators.

1) Որքան բարձր է **տնտեսական բարեկեցության մակարդակը** (մեկ շնչին ընկնող ՀՆԱ), այնքան պակաս է պաշտոնյաների հակվածությունը՝ դիմելու շահույթ ստանալու ապօրինի մեթոդների:

2) Որքան զարգացած լինի **ժողովրդավարությունը**, այնքան մեծ կլինի պաշտոնյայի՝ իր տեղը կորցնելու վտանգը և համապատասխան մարմինների համար կոռուպցիայի դեմ պայքարի հնարավորությունները: Երբ ժողովրդի կողմից վստահված անձը գալիս է իշխանության, հասարակությունը նրանից սպասում է ի շահ բնակչության աշխատանք, և ոչ՝ ի շահ իրեն: Փաստորեն, Կոռուպցիան և ժողովրդավարությունը՝ իր բովանդակ իմաստով և ոչ լոկ երկրում հռչակված ռեժիմի մակարդակով, իրար խստորեն հակասում են: Սա դեռևս չի նշանակում, թե ժողովրդավարական երկրներում կոռուպցիա չկա:

3) **Դատական համակարգի զարգացումը** կանխում է նաև կոռուպցիոն գործընթացների ընդլայնումը:

4) **Որքան մեծ և բարդ է բյուրոկրատիան,** այնքան ավելի շատ հնարավորություններ են բացվում կոռուպցիայի համար: Կարևոր դեր է խաղում պետության կենտրոնացումը. խիստ կենտրոնացված կայսրությունների մեծ մասում կոռուպցիան հասել է աներևակայելի չափերի, ինչպես Հռոմեական և Բյուզանդական կայսրություններում: *Մյուս կողմից, ոչ բոլոր փորձագետներն են հակված **ապակենտրոնացումը** դիտարկել որպես կոռուպցիայի ցածր մակարդակի երաշխիք:*

5) «Հին» պետություններում կոռուպցիոն մեխանիզմները **վերացվել են երկար տարիների պրակտիկայի արդյունքում և ավելի շատ սոցիոմշակութային երևույթ են**, ինչպես, օրինակ, Ռուսական կայսրությունում[16]: Մյուս կողմից, «երիտասարդ պետություններում» լայնածավալ սեփականաշնորհումը և պետական մեխանիզմների թերզարգացումը կոռուպցիայի գրեթե անսահման հնարավորություններ են տալիս, և ոչ միայն Ռուսաստանի Դաշնությունը, այլ նախկին սոցիալիստական ճամբարի գրեթե բոլոր երկրները կարող են սրա օրինակ լինել:

6) **Երկրի հսկայական չափերն** անխուսափելիորեն դժվարություններ են առաջացնում տեղական պաշտոնյաների գործունեությունը կառավարելու և վերահսկելու հարցում (հիշենք Ն.Վ. Գոգոլի «Գլխավոր տեսուչ» (Ревизор) կատակերգությունը): Այս առումով կոռուպցիայի հակազդման գործիքների թվում որպես անհրաժեշտ գործունեություն մենք առանձնացնում ենք ոչ միայն ՏԻՄ-երի նկատմամբ վերահսկողության արդյունավետ իրականացումը, այլ նաև կենտրոնի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև սերտ համագործակցությունը, հակակոռուպցիոն միջոցառումների համատեղ համակարգումը:

*Բանաձևից բխող պատճառներից զատ՝ գործնականում կարող ենք նկատել նաև կոռուպցիային նպաստող այլ պատճառներ:* Սակայն թվարկված պատճառների հետազոտությունը կարող է

[16] Подробнее см.: И. А. Голосенко, «Феномен «русской взятки": очерк истории отечественной социологии чиновничества»

հուշել, որ թեկուզ դատական իշխանության և ժողովրդավարության զարգացումն Արցախի դեպքում միշտ էլ ցանկալի են, սակայն սոցիոմշակութային երևույթ լինելու կամ երկրի մեծ չափեր ունենալու հետ կապված խնդիրը մեր երկրի դեպքում կարելի է միանգամից բացառել: Արցախում հնարավորինս արդյունավետ կերպով է իրականացվում նաև ՏԻՄ-երի աշխատանքի նկատմամբ վերահսկողությունը: Ի դեպ՝ տեղական ինքնակառավարման և նաև կրթության ոլորտը համարվում են ամենառիսկային գոտիները: Դա կապված է համայքներում իրականացվող բազմաբնույթ ֆինանսատնտեսական գործառույթների հետ, և մյուս կողմից, հաշվի առնելով, որ համայնքները պետության կողմից ստանում են բավականին մեծ գումարներով դոտացիաներ, դրանց ծախսերը նույնպես գտնվում են պետության կողմից լուրջ ուշադրության ներքո:

Կոռուպցիայի պատճառները շատ են. Դրանց թվում, մեր կարծիքով, առանձնահատուկ դեր է խաղում քաղաքացիների **ցածր իրավական մշակույթը**, ինչպես ցանկացած իրավական հարցի, այնպես էլ այս դեպքում հասարակության **իրավագիտակցությունը** սկզբունքային դեր ունի, դրա շնորհիվ հնարավոր է ձևավորել հիմնավոր կարծիք իրավիճակի վերաբերյալ, վերլուծել և գնահատել այն, հասկանալով պետության և բնակչության վրա ունեցած բացասական ազդեցությունը՝ քայլեր ձեռնարկել, միջոցներ հայթայթել ինչ-որ բան դեպի դրականը փոխելու համար, վերջապես՝ ցուցաբերել անհանդուրժողականություն, ձգտել սեփական ձայնը լսելի դարձնելուն, *չէ՞ որ ոչ ոք էլ կոռուպցիայից տուժելուց ապահովագրված չէ:* Հաճախ նկատելի է մարդկանց պասիվությունը՝ հակակոռուպցիոն համակարգի նկատմամբ անվստահության պատճառով, նաև՝ օրենքին հետևելու մոտիվացիայի բացակայությունը: Որոշ մասնագետներ առանձնացնում են նաև օրենսդրության անկատարությունը, դժվար հասկանալի ենթաօրենսդրական ակտերի առկայությունը:

Անընդունելի է հասարակության՝ մշտապես լռելու և հանդուրժելու վարքագիծը, հատկապես այն դեպքում, երբ կա դրանից դժգոհություն. *Հաճախ մարդիկ իրենք են համակերպվում իրավիճակին, մինչդեռ կարող են և պետք է անեն ամենը, որպեսզի ճիշտ հակառակը լինի:*

Կոռուպցիոն հանցագործությունների կատարման պատճառներից զատ շատ կարևոր է շեշտել նաև արդեն իսկ կատարված հանցագործությունների բացահայտմանը և ըստ այդմ՝ կատարողի նկատմամբ պատժի կիրառմանը խոչընդոտող պատճառների մասին: Ըստ էության, կոռուպցիայի կանխարգելման և պատժի կիրառման համար իրավապահ մարմինները նախ պետք է իմանան դրա մասին. Միշտ չէ, որ հնարավոր է լինում դրանք բացահայտել համապատասխան մարմինների կողմից իրականացվող մոնիթորինգի միջոցով. Հաճախ այս գործում օգնության է գալիս հասարակությունը: Պատկերացրեք՝ եթե յուրաքանչյուր քաղաքացի, նկատելով կոռուպցիոն հանցագործության դեպքեր, հայտնի այդ մասին իրավապահ մարմիններին, որքան հեշտ, արագ և արդյունավետ կդառնա գործընթացը: Այս կոնտեքստում չենք կարող անմասն մնալ քաղաքացիական հասարակության մասին խոսելուց, որի առկայությունն ու ամենակարևորը՝ անխոչընդոտ գործունեությունը ժողովրդավարական ռեժիմի (ինչպիսի ռեժիմ ունեն նաև ՀՀ և Արցախը) ամենասկզբունքային պահանջներից է: ՀԿ-ները, քաղհասարակության ակտիվ անդամները ևս պետք է վերոնշյալին ուղղված քայլեր ձեռնարկեն, և մեր կարծիքով մինչև հասարակության իրազեկումը՝ ի՞նչ է կոռուպցիան, ի՞նչու է վտանգավոր, ինչու՞ և ինչպե՞ս վերացնել հարցերին պատասխաններ տալը, պետք է

հավաստիացնել մարդկանց, որ իրենցից յուրաքանչյուրի տված ինֆորմացիան կարևոր է, որ դա կարող է անել միայն ինքը և որ այդ տեղեկության պակասի դեպքում այլևս հնարավոր չի լինի բացահայտել հանցագործությունը, որ իսկապես կարող է օգնել իրավապահ մարմիններին և դրանով իսկ՝ իր երկրին: Այլ կերպ ասած՝ այս գործում ևս մարդը պետք է գիտակցի, որ ինքն իր տեսածով և ինֆորմացիայով հանդերձ կարևոր է: **Ուստի՝ պետք է աճի իրավապահ մարմին – քաղաքացի (քաղաքացիական հասարակություն) սինխրոն համագործակցությունը:**

Սակայն այստեղ էլ ունենք խնդիր. Որոշ մարդիկ կարող են ասել՝ ««հեշտ է հնչում»՝ նկատեցիր կոռուպցիոն (հաճախ ոչ միայն կոռուպցիոն) հանցագործություն՝ իրազեկիր դրա մասին». և այս ընկալումը կարելի է հասկանալ հայկական իրականության մեջ, չէ՞ որ քիչ չեն դեպքերը, երբ հանցագործության բացահայտումից և հատկապես պատժից հետո պրոբլեմներ են առաջանում հենց հայտնողի համար՝ կոռուպցիոն հանցագործություն կատարած անձի կողմից: Այսպես, կոռուպցիայի դեպքերի մասին մարդիկ հաճախ լռում են **վախենալու** պատճառով. օրինակ՝ ղեկավարի խախտման մասին աշխատողի՝ իրավապահ մարմիններին հայտնելու դեպքում աշխատողը վախենում է, որ ղեկավարը կարող է իրեն աշխատանքից հեռացնել, պաշտոնն իջեցնել, այս կամ այն կերպ ճնշում գործադրել, կամ նույնիսկ վնաս պատճառել իր կյանքին կամ առողջությանը:

Այսպիսի իրավիճակների դեպքում ելք գտնելու հետաքրքիր փորձ ունի ՀՀ-ը: Ինովացիոն մոտեցման կիրառման միջոցով հնարավոր է քաղաքացիների համար ստեղծել հնարավորություն՝ հայտնել կոռուպցիայի մասին և միևնույն ժամանակ մնալ չբացահայտված՝ հաջողությամբ խուսափելով հետագա անցանկալի միջադեպերից: Այսպես, 2017թ. մայիսի 11-ին ՀՀ Կառավարության կողմից ընդունել **է «Ազդարարման համակարգի մասին»** օրենսդրական փաթեթ: Նոր նախագիծը հնարավորություն է տալիս, որ քաղաքացիները բարձրաձայնեն կոռուպցիայի մասին սեփական համայնքներում և աշխատավայրերում՝ մնալով անանուն: Նույնպիսի հնարավորություն է տալիս նաև «Բիզպաշտպան» (Bizprotect.am) կայքը: Հայտը ամբողջությամբ կոդավորվում է, բացի այդ, գործում են գաղտնիության հավելյալ երաշխիքներ Tor ինտերնետ բրաուզերով օգտվելու դեպքում, համակարգչի IP հասցեն չի կարող բացահայտվել, հետևաբար ոչ ոք չի կարողանա պարզել անձի ինքնությունը[17]:

Իհարկե վերոհիշյալ գործիքի գաղափարը ողջունելի է, բայց այն դեպքում, երբ դրան դիմող քաղաքացին, անանուն մնալուն զուգահեռ, նաև սուտ հաղորդում չտա՝ օգտվելով անհայտ մնալու առիթից: Դա կարող է տեղի ունենալ այս կամ այն պաշտոնյայից կամ պետից այլ պատճառով դժգոհ լինելու կամ անձնական հակակրանքի պատճառով, երբ անձը պարզապես վատություն անելու, ուրիշի համար խնդիրներ և քաշքշուկներ առաջացնելու մոտիվով կեղծ հաղորդում տա, իսկ անձը բացահայտված չէ, հետևաբար ոչ մի հետ պահող բան չկա: Սա կարող է ավելորդ բարդություններ ստեղծել նաև կազմակերպության և իրավապահ մարմինների աշխատանքի համար, երբ մասնագետները ստիպված լինեն զբաղվել այնպիսի գործով, որը վերջին հաշվով գոյություն չունի: Փաստորեն, ևս մեկ անգամ բախվեցինք հասարակության իրավագիտակցության հարցին. Ոչ մի իրավագիտակից քաղաքացի ամենայն

[17] «Բիզպաշտպանի» մասին առավել մանրամասն տե՛ս https://www.bizprotect.am/ կայքէջում:

հավանականությամբ չի փորձի խնդիրներ առաջացնել առանց այդ էլ ծանրաբեռնված իրավապահ մարմինների համար՝ քաջ գիտակցելով, որ դրա վրա ծախսվող ժամանակը անհրաժեշտ է այլ աշխատանքների համար: Այսպիսով, գործիքի արդյունավետության մասին խոսելիս պետք է դիտարկենք հարցը բոլոր տեսանկյուններից:

*Արցախում չկա կառուցիոն հանցագործությունների մասին անանուն ազդարարման կայք:* ԼՂՀ Քրեական դատավարության օրենսգրքի[18] 188-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է. «Չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ կամ մտացածին անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդումը քրեական գործ հարուցելու առիթ չէ»: Սակայն, ինչպես նշված է ԱՀ Օպերատիվ- հետախուզական գործունեության մասին օրենքի[19] 11-րդ հոդվածի 2-րդ կետում՝ Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները[20] պարտավոր են ստուգել ստացված անանուն հաղորդումը, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել: Իրավապահ մարմինները, ստանալով անանուն հաղորդում հանցագործության մասին, այդ թվում և կոռուպցիոն, դիմում են ՕՀԳ իրականացնող մարմիններին՝ պարզելու հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունների հավաստիությունը, և քրեական գործ հարուցելու հիմքերի առկայության դեպքում հարուցվում է քրեական գործ և տարվում է պատշաճ քննություն:

Փաստորեն, Արցախում, օրենսդրական մակարդակով կարգավորված է անանուն հաղորդումների ստուգման պահանջը:

Տեղին է նաև մեջբերել ԱՀ Քրեական օրենսգրքի[21] 328-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված *խրախուսական նորմը.* **«Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն»:** Փաստորեն, ԱՀ օրենսդրությունը կոռուպցիոն հանցագործության բացահայտման ևս մեկ մեխանիզմ է նախատեսում՝ այս անգամ կաշառք տվողի համար լրացուցիչ օրենսդրական երաշխիք՝ քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն նախատեսելով:

Աշխարհում հատկապես ժամանակակից տեղաշարժերը ցույց տվեցին, որ կան **ֆորսմաժորային իրավիճակներ,** որոնք կոռուպցիայի կատարման «պոտենցիալ հնարավորություն» կարող են դառնալ: 2020 թվականի ինդեքսը նաև ցույց տվեց, թե ինչպես է գլոբալ կոռուպցիան խափանում

---

[18] Ընդունվել է 2008թ. դեկտեմբերի 17-ին.
[19] Ընդունվել է 2019թ. մարտի 27-ին.
[20] ՕՀԳ մասին օրենքի 8-րդ հոդվ. համաձայն՝ Օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն՝
1) ոստիկանությունը, 2) ազգային անվտանգության մարմինները, 3) հարկային մարմինները:
[21] Ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին.

երկրների կարողությունները՝ պաշտպանելու հանրային առողջությունը և նրանց տնտեսությունները համաճարակի ժամանակ[22]: Ըստ երկրների փորձի և վիճակագրության՝ այդպիսին էր նաև *կորոնավիրուսային համաճարակի տարածումը.* «Կորոնավիրուսի համավարակը միայն առողջապահական և տնտեսական ճգնաժամ չէ: Այն կոռուպցիոն ճգնաժամ է: Ճգնաժամ, որի կառավարումը մենք ներկայումս տապալում ենք: Անցած տարին մեր հիշողության մեջ իրեն հավասարը չունեցող փորձություն էր պետությունների համար, և այն երկրները, որոնցում կոռուպցիայի մակարդակներն ավելի բարձր էին, ավելի պակաս ընդունակ էին դիմակայելու իրենց առջև ծառացած մարտահրավերներին: Բայց նույնիսկ այն երկրները, որոնք գտնվում են ԿԸՀ-ի վերին հորիզոնականներում, պետք է շտապ կերպով անդրադառնան իրենց մոտ և իրենց սահմաններից դուրս կոռուպցիայի տարածման մեջ իրենց խաղացած դերին», - նշում է Թրանսպարենսի Ինթերնեշնլի նախագահ տիկին Դելիա Ֆերեյրա Ռուբիոն: **Կոռուպցիայի ընկալման 2020թ. համաթիվը բացահայտում է, որ լայնատարած կոռուպցիան թուլացնում է կորոնավիրուսի համավարակի հակազդումը և սպառնում է համաշխարհային վերականգնմանը[23]:** ԿԸՀ ավելի բարձր մակարդակ ունեցող երկրները կարող են իրենց թույլ տալ կատարել ավելի շատ ներդրումներ առողջապահական համակարգերում, քաղաքացիներին տրամադրել առավելագույնս որակյալ բուժօգնություն, նաև՝ պատշաճ վարձատրել բուժաշխատողներին, ուստի այստեղ շատերը կոռուպցիայի դիմելու «անհրաժեշտություն չունեն»: *Եթե ուշադիր լինենք, ապա կնկատենք, որ այս կետում բախվում ենք վերևում նշված՝ կոռուպցիային նպաստող պատճառներից տնտեսական բարեկեցությանը:* Մինչդեռ ԿԸՀ ավելի ցածր մակարդակ ունեցող երկրներում անգամ երկրում ստեղծած աղետալի առողջապահական պայմաններում մարդիկ կան, որ չեն կարողանում ձեռնպահ մնալ կոռուպցիայի դիմելուց. Դեղերի, անհրաժեշտ այլ պարագաների վաճառքում անհնար է չնկատել կոռուպցիան:

Դ.Ա. Մեդվեդևը նշում է, որ «կոռուպցիայի արմատները կայանում են նրանում, որ բնակչության մի ստվար հատված պարզապես թքած ունի օրենքների պահպանման վրա»: Փաստորեն, թքած ունենալով օրենքի, պատժի համակարգի, պետության հնարավոր վնասների վրա՝ անձը դիմում է կոռուպցիոն բնույթի հանցագործության: Համաձայնելով հեղինակի հետ՝ *այնուամենայնիվ նշվածի կոնտեքստում պետք է վերապահում անել*. Վերջինս կարծես կատեգորիկ է սահմանում կոռուպցիայի պատճառը, սակայն ակնհայտ է, որ միայն հասարակության կարգազանց վարքագիծը կամ այլոց կարգազանցության նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքն ի զորու չէ ստեղծել կոռուպցիոն հանցագործությունների այդպիսի պատկեր: Ի թիվս այլ պատճառների, սկզբունքային բացթողում է նաև սա, քանի որ երբ հասարակությունը թերահավատորեն է մոտենում օրենքի և արդարադատության համակարգին՝ աչքի առաջ ունենալով ուրիշների՝ պետական հարկադրանքից «փրկվելու» օրինակներ, ինքն էլ է որոշում դիմել զարտուղի ճանապարհների: Սակայն սա նույնպես արդարացում չէ, որովհետև հասարակությունը պետք է պատրաստ լինի պայքարել անօրինության դեմ, ոչ թե ուղղակի

[22] https://www.transparency.org/en/cpi/2020, Transparency International the global coalition against corruption, 2020 corruption perceptions index.
[23] https://transparency.am/hy/cpi/2020, Թրանսպարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Կոռուպցիայի ընկալման համաթիվ», հղման ամսաթիվը՝ 12.01.2023թ.

քայլերով աճ հաղորդել դրա մակարդակին. *ոչ մի իրավագիտակից քաղաքացի չի կատարում անօրինություն՝ տեսնելով դա, այլ ձգտում է պայքարել դրա դեմ և հասնել արդյունքի:*

Փաստորեն, օրենքով հստակ սահմանված նորմերի նկատմամբ հասարակության ոչ հետևողական վերաբերմունքը պատճառներից դեռ միայն մեկն է:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիան իր «Խարդախություն և կոռուպցիա. կանխարգելում և վերահսկողության քաղաքականություն» աշխատանքում ևս անդրադառնում է կոռուպցիայի պատճառներին: Ըստ դրա՝ ապացուցված է, որ ընկալվող հնարավորության (Perceived Opportunity) վերացումը խարդախության և կոռուպցիայի նվազեցման ամենաարդյունավետ միջոցն է: Այն իրենից ներկայացնում է վերահսկողության բացը, հնարավորություն, որ խարդախությունը կամ կոռուպցիան կարող է իրականացվել առանց խարդախության և կոռուպցիայի կատարող անձի բռնվելու, բացահայտվելու և/կամ նրանց նկատմամբ ձեռնարկված գործողությունների: Այն կարող է լուծվել այնպիսի հսկողության միջոցով, ինչպիսիք են հստակ կարգապահական միջոցների առկայությունը, ֆինանսական միջոցների նկատմամբ պատշաճ հսկողությունը և այլն:

Շարժառիթների թվում են նաև *ֆինանսական ճնշումները, ֆինանսական խնդիրները, ապրելակերպի պահպանման անհրաժեշտությունը (չնայած շատ հաճախ կոռուպցիայով են զբաղվում ապրելակերպի առանձնապես մեծ դժվարություններ չունեցողները*):

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիան խոսում է նաև խարդախության կամ կոռուպցիայի արարքի հիմնավորման մասին, որը կոչվում է ռացիոնալացում: Ռացիոնալացումը չպետք է շփոթել ճշտի կամ սխալի տարբերության հետ: Իրականում հանցագործը հաճախ գիտի, որ դա սխալ է, բայց արարքը արդարացված է համարում այս կամ այն պատճառով: Սրանք կարող են ներառել մտքեր, որ ոչ ոք իսկապես չի տուժի, որ նրանք պարզապես ստանում են այն, ինչ իրենց է պատկանում, որ բոլորն անում են դա, դա լավ նպատակի համար է, կամ որ փողը պարզապես «փոխառվում է»[24]:

Ի դեպ, կոռուպցիա կատարելիս մարդը հաճախ մտածում է, կամ առնվազն իր արարքը մեկնաբանում է այնպես, թե դա իր կատարած բարդագույն աշխատանքի արդյունք է, դա փոխհատուցում է իր ջանքերի:

**Կոռուպցիան հանդիսանում է նշված բոլոր պատճառների առկայության հետևանքը:**

Շարունակելով խոսել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանը խոչընդոտող հանգամանքների մասին՝ նշենք ևս մեկ բան. Հաճախ մարդիկ մտածում են, որ **հետագայում դրա պատճառով կարող են ավելորդ ժամանակ կորցնել,** ընկել քաշքշուկների մեջ (օրինակ՝ մարդը կարող է մտածել, որ իրեն կկանչել հարցաքննության(ների)), ուստի դրանից խուսափելու համար նախընտրում է առհասարակ չբարձրաձայնել այդ մասին. կրկին ունենք

[24] International Federation of Red Cross and Red Crescent Societies, Geneva, 2012 Fraud and corruption prevention and control policy, of the International Federation of Red Cross and Red Crescent Societies, https://www.ifrc.org/sites/default/files/IFRC-Fraud-and-Corruption-prevention-and-control-policy_English.pdf.

իրավագիտակցության ցածր մակարդակի խնդիրը. ոչ մի իրավագիտակից քաղաքացի, գիտակցելով, որ իր մի հաղորդումը կարող է նպաստել հանցագործության բացահայտմանն ու վերացմանը, չի խնայի ժամանակը:

Կոռուպցիայի հնարավոր **բացասական հետևանքների** *1-ին հորիզոնականը՝* ըստ հարցման արդյունքների, զբաղեցնում են ֆինանսական կորուստները (25%), *2-րդ տեղում* հեղինակության ռիսկն է (21%), իսկ *3-րդում՝* կորպորատիվ բացասական միջավայրը (20%): Որո՞նք են կոռուպցիայի բացասական հետևանքները. այս հարցին պատասխանել են հայաստանյան 188 կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ մասնակցելով 2018թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում կատարված «Կոռուպցիայի դեմ պայքարում բիզնեսի դերը. հայաստանյան իրականություն» հետազոտությանը: Որպես այլ հետևանքներ՝ հարցվողները նշել են նաև ոչ առողջ մրցակցային միջավայրը, մեղքի զգացողություն հասարակության առջև, որ դու նույնպես սնուցում ես այդ արատավոր երևույթը[25]:

Կոռուպցիան քառակի՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրին հասցվող **վնասներ** է պատճառում:

- *Քաղաքական առումով* կոռուպցիան հսկայական խոչընդոտ է հարուցում ժողովրդավարությանն ու օրինականությանը: Ժողովրդավարական համակարգում հաստատություններն ու ինստիտուտները լեգիտիմ չեն, եթե դրանցում իրականցվում է չարաշահում հանուն մասնավոր շահի:
- *Տնտեսական առումով* կոռուպցիան տանում է դեպի ազգային հարստության նվազեցման՝ խոչընդոտելով արդար շուկայական հարաբերություններին ու մրցակցությանը, հետևաբար և՝ ներդրումներին:
- Կոռուպցիան առավել վնասակար ազդեցություն է գործում *հասարակության սոցիալական կառուցվածքի վրա՝* չարաշահելով քաղաքական համակարգի, դրա ինստիտուտների և ղեկավարության նկատմամբ ժողովրդի վստահությունը: Հիասթափված հասարակության համար հուսախաբությունն ու ընդհանուր անտարբերությունը հանգեցնում են թույլ քաղաքացիական հասարակության, որն էլ իր հերթին ճանապարհ է հարթում բռնակալների, ինչպես նաև ժողովրդավարական ճանապարհով ընտրված, սակայն անբարեխիղճ առաջնորդների համար, որոնք ազգային ունեցվածքը վեր են ածում անձնական հարստության: Կաշառք պահանջելն ու վճարելը դառնում է նորմ: Ենթարկվել չցանկացողները հաճախ արտագաղթում են, դրանով իսկ երկիրը զրկելով ամենակարող և ազնվագույն քաղաքացիներից:
- Կոռումպացված համակարգերի հետևանքներից է նաև *շրջակա միջավայրի քայքայումը:* Շրջակա միջավայրի վերաբերյալ կանոնների և օրենսդրության

[25]ԲիզՊաշտպան, Որո՞նք են կոռուպցիայի բացասական հետևանքները. 17.05.2019թ. https://bizprotect.am/am/news/show/207?fbclid=IwAR2Jn-gsLXwYvV7ovBnM71vOoitTg6W36QK7ViRkxqVG3TpHyI3fyEfu5Cc

բացակայությունը կամ դրանց չկիրառելը հանգեցնում է աղտոտվածության, բնական ռեսուրսների գերշահագործման և այլ վնասների՝ ավիրելով շրջակա միջավայրը[26]:

Կարճ ասած՝ իմ կարծիքով կոռուպցիան կարող լինել և՛ պատճառ, և՛ հետևանք:

Ի՞նչ անել, երբ կոռուպցիա արդեն կա, այն քեզ իրավամբ անհանգստացնում է՝ անմիջականորեն վնասելով կամ ոչ, և միևնույն ժամանակ դու այն մարմինը կամ մարմնի ներկայացուցիչը չես, ով զբաղվում է դրանով: Բարեբախտաբար, ԱՀ օրենսդրությունը նախատեսում է նման դեպքերում հենց համապատասխան մարմիններին իրազեկելու հնարավորությունը, միևնույն ժամանակ, այս հարցի լուծմանն աջակցելուց անմասն չէ նաև քաղաքացիական նախաձեռնողականությունը:

Կոռուպցիայի դեմ պայքարը կարող է հաջողել հասարակական ակտիվության և հասարակության լայն աջակցության շնորհիվ: Պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ նմանաբնույթ հանցագործությունների բացահայտումը մեծապես կախված է իրավապահ մարմինների համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացված օպերատիվ աշխատանքների արդյունքներից: Քաղաքացիների մասնակցությունը մի շարք դեպքերում կարող է ծայրահեղ պասիվ լինել: Դա կապված է հասարակության որոշ խավի իրավագիտակցության դեռ ոչ բարձր մակարդակով, առանձին դեպքերում հոգեբանական դրսևորումներով՝ դա իմ գործը չէ, դա ինձ չի վերաբերվում և այլն:

Ամբողջ աշխարհում ստեղծվել են կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ գործիքներ, որոնք հիմնականում գործարկում են հասարակական կազմակերպությունները՝ պետության հակակոռուպցիոն ռազմավարական քաղաքականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելով, հասարակությանը տարբեր միջոցառումների և թրեյնիգների միջոցով կրթելով՝ նպատակ հետապնդելով կանխարգելել կոռուպցիան, նպաստել այս ոլորտում հասարակության անհնադուրժողականությանը, իսկ եթե փորձենք նպատակները հանրագումարի բերել՝ իրենց համար ստեղծել լավ ապագայի հնարավորություն: Այդպիսիների թվում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) գլոբալ հակակոռուցիոն շարժումը, որն իր պաշտոնական ներկայացուցիչն ունի ՀՀ-ում ի դեմս «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» -ի (ԹԻՀԿ):

2014 թ. -ից Հայաստանում գործում է ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ բաղկացած մոտ 80 քաղաքացիական հասարակության կազմակերպություններից (ՔՀԿ-ներ)՝ ինչպես Երևանից, այնպես էլ ՀՀ մարզերից: Բացի հասարակության հակակոռուպցիոն ընկալման և իրազեկության մակարդակի բարձրացմանը, կոռուպցիայի զոհ դարձած քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը միտված լինելուց, այն նպատակ ունի բարձրացնել ՔՀԿ-ների կողմից կառավարության հակակոռուպցիոն բարեփոխումների նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը, ամրապնդել ՔՀԿ-ների՝ մոնիթորինգի, հանրային վերահսկողության և հակակոռուպցիոն գործունեության իրականացման կարողությունները: Ի դեպ, ինչպես նշում է ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի նախագահ Կարեն Զադոյանը՝ պատասխանելով մեր

[26] Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Որո՞նք են կոռուպցիայի վնասները» https://www.transparency.am/hy/what-is-corruption, հղման ամսաթիվը՝ 12.01.2023թ.

մի քանի հարցերին, Արցախյան ՀԿ-ները ևս կարող են կոալիցիայի անդամ դառնալ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կանոնակարգը, այդ հարցում, որևէ արգելք չի սահմանում[27]:

Նշված կազմակերպությունները իրենց նպատակին հասնելու գործում ահռելի աշխատանք են տանում քաղաքացիական հասարակության հետ, իսկ նրանց թվում ամենաշատը երիտասարդների: Աշխատանքում բազմիցս արծարծվեց քաղհասարակության դերի և աշխատանքի կարևորության մասին, և ոչ միայն քաղհասարակության, որը շատ երկրների՝ այդ թվում նաև Արցախի դեպքում կարող է բնակչության քիչ մասը կազմել: Կարևոր է, որպեսզի աշխատանքները կատարվեն ողջ բնակչության շրջանում և կրեն գլոբալ բնույթ՝ կազմակերպվեն և անցկացվեն ոչ թե միայն մայրաքաղաքում, այլ նաև շրջաններում՝ ուսումնարանների, դպրոցների, տարբեր մարմինների աշխատողների ներգրավմամբ, հակառակ դեպքում կոռուպցիայի մասին հաղորդումները և կանխարգելումը նույնպես լոկալ բնույթ կկրեն: Առաջին հայացքից նկատելի է «Հակակոռուպցիոն դպրոցների» և «Հակակոռուպցիոն ակադեմիաների» կազմակերպումը, որոնք մասնակիցներին ինտերակտիվ քննարկումների, լավ մասնագետների, ֆիքսված դասընթացների միջոցով օգնում են թե՛ գիտելիք ստանալ, թե՛ սովորել այն կիրառել:

Մեր այն հարցին, թե առհասարակ հնարավո՞ր է, որ կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման գործով զբաղվեն միայն իրավապահները և դա ունենա նույն այն արդյունավետությունը (կամ գուցե ավելի), ինչ որ ունի քաղաքացիական հասարակության վերահսկողության պայմաններում, Կ. Ձադոյանը պատասխանում է. «Կարծում ենք արդյունավետ է, երբ կոռուպցիայի դեմ պայքարում իրենց ուժերը մեկտեղում են և՛ իրավապահ մարմինները (կոռուպցիոն հանցագործությունները բացահայտելու և պատժի անխուսափելիությունը ապահովելու ուղղությամբ), և կոռուպցիայի կանխարգելմամբ զբաղվող մարմինը՝ ի դեմ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, և՛ հակակոռուպցիոն կրթության հարցերով զբաղվող մարմինները՝ ի դեմս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ԿԳՄՄՆ-ի, և՛ հասարակությունը՝ ի դեմս քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և քաղաքացիների: Քաղաքացիական հասարակության վերահսկողական գործառույթը նույնպես հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն տարրերից մեկը[28]»: Իր գործունեությունն իրականացնելիս կոալիցիան համագործակցում է իրավապահ մարմինների հետ[29]:

Այսպիսի գործընթացներում, բնավ չմերժելով ավագ սերնդի պատասխանատվության և պատրաստակամության անհրաժեշտությունը, այնուամենայիվ ավելի մեծ նախաձեռնողականություն, պայքարելու եռանդ ու հաջողելու հավատ ենք տեսնում երիտասարդության մեջ: Պարզելու համար՝ որքանով է երիտասարդությունն արդարացնում իրեն հակակոռուպցիոն գործընթացներում ներգրավվելիս, մի քանի հարց ենք ուղղել «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի» դիտորդական առաքելության և

---

[27] Կոալիցիայի կանոնակարգի 3-րդ մաս, https://bit.ly/3kllymR .
[28] ՀՀ 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության կատարման այլընտրանքային մշտադիտարկման զեկույցը՝ https://armla.am/49335.html).
[29] Տե՛ս Կոալիցիայի և ՀՀ գլխավոր դատախազության հետ կնքված հուշագիրը՝ https://armla.am/wp-content/uploads/2017/12/ALA-Genpro.pdf .

հակակոռուպցիոն կրթական ծրագրերի համակարգման պատասխանատու **Մարիամ Հովեյանին:** Վերջինս նշում է. «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործընթացին երիտասարդները միանում են հասարակությանը օգտակար լինելու միտումով և արդարության անկեղծ ձգտմամբ: Այդ ներքին մղումն է, որ նրանց բերում է այս դաշտ. ներքին մոտիվացիան ամենակարևորն է, քանի որ դրա բացակայության պայմաններում մեկ երկու դասընթացից հետո պրոցեսը չեն ցանկանա շարունակել: Երիտասարդները նաև զերծ են տարբեր կոռուպցիոն սխեմաներում կամ շահերի բախման իրավիճակներում արդեն իսկ ներգրավված լինելու ռիսկից, այսպես ասած՝ «մաքուր են», և՛ իրենց կենսագրությամբ, և՛ կենսափորձով, պարզ և ազնիվ մոտեցումներ ունեն: Նրանք բաց են նորությունների, փոփոխությունների հանդեպ, կարծրատիպային չեն, այլ տեսանկյունից են նայում հարցերին, ինչը հեշտացնում է նրանց հետ աշխատանքը: Երիտասարդները ճկուն են, ստեղծագործ և համարձակ. հատկապես այս երեք հատկանիշները շատ կարևոր են: Բնականաբար, նաև սոցիալական ասպեկտներն են դեր խաղում, քանի որ երիտասարդները կաշկանդված և ծանրաբեռնված չեն տարբեր պարտականություններով, օրինակ՝ կենցաղային, աշխատանքային և այլն, և ավելի շատ ժամանակ են կարողանում տրամադրել և ավելի մեծ էնտուզիազմով են կարողանում մասնակցել նման միջոցառումներին: Կարևոր է ընդգծել նաև նրանց մասնակցությունը հենց համայնքային մակարդակում՝ այն գյուղում կամ քաղաքում, որտեղ ինքը ապրում է, քանի որ այդտեղ նրա մասնակցությունն ու ակտիվությունը շատ որոշիչ է. դա կարող է լինել մոնիթորինգային կամ իրազեկման աշխատանքների շնորհիվ: Մոնիթորինգայինը հատկապես կարևոր է, քանի որ կապում է համայնքի երիտասարդներին իրենց բնակավայրին, հողին, երբ որ նրանք մասնակցում են և իրազեկ են համայնքում որոշումների կայացմանը, հանդես են գալիս նախաձեռնություններով, ինչը նրանց ոգեշնչում է»:

Դատելով Արցախում հատկապես վերջին շրջանում երիտասարդության արձանագրած ակտիվությունից՝ պետք է ասեմ, որ դա ապագայի հանդեպ հույս է ներշնչում, բայց մեր կարծիքով դեռ շատ աճելու տեղ ունի. միջոցառումների նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է, չնայած անհրաժեշտ է նաև հիշել Արցախյան գոյապայքարի տարիներին երիտասարդների ակտիվության և պատրաստակամության մասին, հատկապես, երբ դա այդ շրջանում բավական մեծ ռիսկ և, ի՞նչու ոչ՝ անձնազոհություն էր ենթադրում: Դրան հաջորդած տարիներին մի շրջանում կարծես այդ ակտիվությունը թուլացել էր, իսկ մեր օրերում կրկին վերակենդանում է: Այսօր, երբ Արցախը շրջափակման մեջ է, երիտասարդները կամավորությամբ են զբաղվում՝ օգնություններ տրամադրելով դրա կարիքն ունեցող ընտանիքներին և հիվանդներին, նաև, օգտագործելով մասնագիտական ունակությունները, ձգտում են իրազեկել ողջ աշխարհին Արցախում տիրող իրավիճակի մասին, դա անում են նաև տեսանյութերի, նկարների օգնությամբ:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի նախագծի համակարգող **Սարինե Հայրիյանը** մեր հետ զրույցում նշում է. «Միակ ուրախացնող բանը, որ նկատել եմ պատերազմից հետո, *երիտասարդների շրջանում նախաձեռնողականությունն է,* փոփոխությունների ձգտումը, ինչը քաղաքացիական հասունության կաճի, եթե աշխատանք տարվի վերջիններիս հետ»: Արցախում կա առաջ նայող սերունդ, պետք է սնուցել ձգտումն ու սպասել ավելի լավ ապագայի:

Երիտասարդությունն իր տեղեկացվածությամբ, անհանդուրժողականությամբ, ժամանակակից աշխարհում ավելի լավին և արդարին ձգտմամբ քաղաքացիական հասարակության ամենակարևոր շերտը հանդիսանալով՝ փոխում է իրավիճակը. Ավելին, քան վստահ եմ, որ Արցախում կա այն երիտասարդությունը, որը կարող է աջակցել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանը՝ իր գիտելիքներով և ճարպկությամբ:

Շարունակելով խոսել կանխարգելումից՝ պետք է նշել, որ

1. Այդ միջոցառումները պետք է կազմակերպվեն և իրականցվեն իշխանության, իրավապահ մարմինների և բիզնեսմենների ներգրավմամբ և համագործակցությամբ (իհարկե այնքանով, որքանով այդ աշխատանքը թույլատրված է օրենքով), ինչը, մեր խորին համոզմամբ, կբարձրացնի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ պրոֆեսիոնալիզմից, բարձր մասնագիտական գիտելիքներից և փորձից բացի՝ այս դեպքում նշված անձինք նաև կունենան որոշակի, մինչև իսկ անձնական պատասխանատվության աստիճան երիտասարդների և հասարակության առջև, իսկ մասնագիտական բարձր հեղինակություն ունենալը սկզբունքային է***: Փաստորեն, այս գործում պետք է միասնականություն, մի բան, որի կարիքն է զգում բովանդակ պետությունը,***

2. Հակակոռուպցիոն միջոցառումների իրականցման համատեքստում պետք է աճի **Հայաստան- Արցախ արդեն իսկ սկսված համագործակցությունը:** Անհրաժեշտ է իրականացնել փորձի փոխանակում, հաջողած աշխատանքային գործիքների ներդրում,

3. Չեմ կարծում, որ ավելորդ կլիներ ***նեղ մասնագիտական ֆորմատի դասընթացներ*** կազմակերպել իրավաբան-ուսանողների համար, քանի որ վերջիններս են համակարգում ապագա աշխատողները,

4. Հաշվի առնելով կոռուպցիայի կանխարգելման՝ մեր նշած միջոցներից մեկը, ըստ որի պետք է բարձրացնել հասարակության անհանդուրժողականությունը հարցի նկատմամբ և ***առավելագույնս իրազեկել, անհրաժեշտ ենք համարում միջոցառումները իրականացնել*** ինչպես նեղ մասնագիտական ոլորտում՝ իրավաբան ուսանողների ներգրավմամբ, այնպես էլ քաղաքացիական հասարակության, ՀԿ-ների մասնակցությամբ ավելի լայն բնույթի միջոցառումներ,

5.Կոռուցիոն ռիսկերի կրճատմանն է նպաստում նաև ***պաշտոնյաների թափանցիկ և հաշվետու աշխատելաոճը*** ( իհարկե սա չի նշանակում, որ գաղտնիություն պահանջող աշխատանքները բացահայտ իրականացնելը թույլատրելի է):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը և արդի իրավիճակի վերլուծությունը թույլ են տալիս ամբողջական պատկերացում կազմել կոռուպցիա երևույթի և դրա վերացման ուղիների վերաբերյալ՝ ո՞վքեր պետք է անեն դա, ինչպե՞ս, ու՞մ աջակցությամբ:

Վկայակոչելով աշխատանքում նշված առաջարկները՝ պետք է նշենք, որ աշխատասիրության, պատրաստակամության կողքին կան հանգամանքներ, որոնք, ցավոք, մեր կամքից կախված չեն, բայց կարող են ուղղակիորեն ազդել միջոցառումների կազմակերպման որակի վրա, և դեռ հարց է՝ կարո՞ղ են դրանք ընդհանրապես կազմակերպվել Արցախի աշխարհաքաղաքական իրավիճակում, թե՞ ոչ: Փորձը ցույց է տալիս, որ հետպատերազմյա ժամանակաշրջանում բազմաթիվ միջոցառումների նախաձեռնությունները հաջողությամբ են ավարտվել՝ հասնելով իրենց նպատակին: Սակայն, ինչպես ցույց է տալիս ամենօրյա փորձը, վաղվա համար պլանավորված միջոցառումները կարող են շատ արագ չեղարկվել:

Այնուամենայնիվ, վերադառնալով կոռուպցիայի թեմային, պետք է նշել, որ ըստ վիճակագրության դա Արցախի Հանրապետությունում լայն տարածում չունի՝ հատկապես համեմատած այլ երկրների իրավիճակին, իսկ նմանատիպ դեպքերի վերաբերյալ քրեական վարույթներով տարվում է պատշաճ քննություն: Որոշ դեպքերում նաև հաշվի առնելով Արցախում ստեղծված իրավիճակը և առանց այդ էլ բարդ դրությունը՝ շատ մարմիններում գիտեն, որ դա կա, բայց լռում են (լռելու այլ պատճառներ աշխատանքում ևս թվարկված են): Իհարկե, այստեղ նշանակություն ունի հանցագործության լատենտային՝ գաղտնի բնույթը, քանի որ դրանով պայմանավորված վիճակագրական տեսքը իրականից կարող է տարբերվել: Դրա համար կոռուպցիայի բացահայտման գործով զբաղվում են նաև հատուկ մասնագիտացված ՀԿ-ներ, որի փորձն ունեն աշխարհի բազմաթիվ պետություններ, այս առումով կարևոր է նաև վերհիշել, որ փաստորեն ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան նույնպես Արցախի ՀԿ-ներին անդամակցության առումով արգելք չունի: Նաև՝ մեր երկրում դրա ցածր մակարդակը երբեք չի նշանակում, որ կարող է կորչել հասարակության լրջությունն ու աճել հանդուրժողականությունը երևույթի նկատմամբ: Կարող ենք ասել, որ անկախ նրանից, թե քաղաքացին հաղորդում կտա՞ հանցագործության մասին, թե ոչ, չնայած դա ևս շատ կարևոր է, նա առնվազն կկարողանա ինքնապաշտպանվել իր գիտելիքներով՝ թույլ չտալով, որ ինչ- որ մեկը, ուրիշին կաշառելու կամ այլ մեթոդով իրեն զրկի որևէ հնարավորությունից: Ինչ վերաբերում է հակակոռուպցիոն կրթությանը, ապա դա ամենասպասվող և հետաքրքիր միջոցառումներից է Արցախում՝ երիտասարդների և հատկապես իրավաբան ուսանողների համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. ՀՀ Քրեական օրենսգիրք, ուժի մեջ է մտել 2021թ. մայիսի 5-ին.
2. ԼՂՀ Քրեական օրենսգիրք, ընդունված է 2003թ. ապրիլի 18-ին.
3. ԼՂՀ Քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված է 2008թ. դեկտ. 17-ին.

4. Օպերատիվ- հետախուզական գործունեության մասին ԱՀ օրենք, ընդունված է 2019թ. մարտի 27-ին.
5. ԱՀ Դատախազություն, ԱՀ գլխավոր դատախազության ԿՏԳՊԾԴՈՒՀԳ և ՊԾՊ բաժնի ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական է. Ա. Արզումանյան, Տեղեկանք 2021թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ.
6. ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի Կանոնակարգ, https://bit.ly/3kIlymR
7. Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը, «ՀՀ Դատախազության դպրոց» ՊՈԱԿ, Գ. Սարգսյան, Ս. Ծաղիկյան, Երևան 2010, 270 էջ.
8. Коррупция: причины возникновения, влияния и методы борьбы, Лучшие доклады на научной студенческой конференции «Социальная ответственность государства, бизнеса и гражданского общества» МГИМО-Университет, 5 декабря 2008 года, №1(8), 2009.
9. Подробнее см.: И. А. Голосенко, «Феномен «русской взятки": очерк истории отечественной социологии чиновничества».
10. Ukaid for British people, Department for international development. "Why corruption matters: understanding causes, effects and how to address them". Evidence paper on corruption, January 2015.
11. Rajeev K. Goel and Michael A. Nelson, Causes of corruption: History, geography and government, BOFIT Discussion Papers, Helsinki, 2008.
12. International Federation of Red Cross and Red Crescent Societies, Geneva, 2012 Fraud and corruption prevention and control policy, of the International Federation of Red Cross and Red Crescent Societies.
13. prosecutornk.am, ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱԿՆԿԱԼՈՒՄ Է ՈՂՋ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ, Հարցազրույցը վարեց Նորայր Հովսեփյանը, www.artsakhtert.com.
14. ՀՀ 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության կատարման այլընտրանքային մշտադիտարկման զեկույցը՝ https://armla.am/49335.html.
15. Տե՛ս Կոալիցիայի և ՀՀ գլխավոր դատախազության հետ կնքված հուշագիրը՝ https://armla.am/wp-content/uploads/2017/12/ALA-Genpro.pdf.
16. «Բիզպաշտպան», պաշտոնական կայքէջ՝ https://www.bizprotect.am/:
17. henaran.am, պաշտոնական կայքէջ՝ https://henaran.am/.
18. Թրանսպարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայքէջ՝ https://www.transparency.am/.
19. Transparency International the global coalition against corruption , official website- https://www.transparency.org/.
20. United Nations Office on Drugs and Crime (UNODC), official website- http://www.unodc.org.